Հաշվետու հանդիպում ՏԵՄՊՈՒՍ ծրագրի «ԳՈՎԵՐՆ» նախագծի շրջանակներում

ՏԵՄՊՈՒՍ ծրագրի «Գովերն» նախագծի շրջանակներում 2016թ. մարտի 2-ին Հյուսիսային համալսարանում տեղի ունեցավ հանդիպում Հայաստանում Էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակի ներկայացուցիչներ Լանա Կառլովայի և Անի Թորոսյանի հետ: Հանդիպումը կրում էր մոնիտորինգի բնույթ, քննարկվեցին ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները, վերապատրաստումների արդյունքներն

ու ձեռքբերումները: Համալսարանի Արտաքին կապերի պատասխանատու Ս. Սարգսյանն անդրադարձավ համալսարանի՝ այդ ուղղությամբ կատարած աշխատանքներին, այնուհետև ծրագրի շրջանակում եվրոպական բուհերում թրեյնինգների մասնակցած բուհի աշխատակիցները ներկայացրեցին իրենց ձեռք բերած արժեքավոր փորձը, որը ներկայումս կիրառում են համալսարանում: Մասնավորապես, իրավագիտության ամբիոնի վարիչ Անի Խեչոյանն անդրադարձավ Լյուվենի համալսարանում անցկացրած թրեյնինգներին, խոսեց ՄԿԾ-ների վերաբերյալ մեր եվրոպացի գործընկերների ուսանելի փորձի մասին, որի շնորհիվ ամբիոնը բենչմարքինգի միջոցով վերանայել է իր առարկայական ծրագրերը: Ինչպես նշեց Հայաստանում Էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակի համակարգող Լանա Կառլովան, Հյուսիսային համալսարանը ծրագրում ներառված միակ մասնավոր բուհն է: Նա հավելեց նաև, որ կատարվել են մեծ աշխատանքներ. երկու տարվա ընթացքում բուհում ձևավորվել է նոր աշխատառճ, նոր մոտեցում կրթական գործընթացների նկատմամբ: Լանա Կառլովան դիմեց ներկաներին՝ դասախոսների ու վարչական աշխատակիցների փոխանակման ծրագրերին ավելի ակտիվ մասնակցելու առաջարկությամբ: